

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
1. Դպրոցի առաքելությունը.....	3
2. Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ .....	5
3. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերը.....	9
4. Նպատակների և խնդիրների սահմանումը.....	34
5. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.....	36
6. Ռիսկերը.....	82
7. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.....	84
8. Վերահսկողության մեխանիզմները.....	85
9. Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները.....	91
10. Լուսանկարներ մեր առօրյայից.....	96
11. Հաշվետվության ձևաչափին կցվող փաստաթղթեր.....	140

Հաշվետվությունը ներառում է յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ , հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք կցվում են հաշվետվության ձևաչափին

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### Կրթությունը՝ և՛ իրավունք և՛ պարտականություն է

Արդի աշխարհի սրբնթաց զարգացումը հանգեցրել է փոփոխության հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև՝ կրթության ոլորտում: Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար (<<Կրթության մասին>> ՀՀ օրենք, հոդված 3.1): Ներկայումս ամենաբարդ և հրատապ խնդիրներից մեկն էլ հիմնարար գիտելիքներով զինված, ազատ, ինքնուրույն, հասարակության մեջ լիովին ներառված և ստեղծագործ անհատների ուսուցումն ու դաստիարակումն է: Այս հարցում շարունակում է իր կարևոր դերն ունենալ դպրոցը: 21-րդ դարը ինֆորմացիայի և կիբեռգիտելիքների դար է, իսկ դա նշանակում է, որ կրթական համակարգը պետք է լուծի սկզբունքորեն նոր, գլոբալ խնդիր՝ նախապատրաստելով սերունդներին կյանքի նոր պայմաններին ու գործունեությանը ինֆորմացիոն և մոբիլ աշխարհում: Հետևաբար, հասարակության զարգացման այս փուլում անհրաժեշտություն է առաջանում դպրոցում ստեղծել այնպիսի կրթական տարածք, որտեղ սովորողների մոտ կձևավորվեն 21-րդ դարի պահանջներին համապատասխան որակներ, գիտելիքներ, կարողունակություններ ու հմտություններ:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է: Այս ծրագիրը կազմելիս առաջնորդվել են Հայաստանի Հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության նախարարի 22.09.2022թ. N35-Ն հրամանին համապատասխան՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահարջներով ու ձևաչաձով: Ծրագրի կազման հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև հաշվի է առնվել Մեծ Այրում համայնքի առանձնահատկությունները և դպրոցի առաքելությունը:

## 1.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

**Կրթության ամբողջ նպատակը սովորողին բազմակողմանի զարգացած և ուժեղ քաղաքացի դարձնելն է:**

Պետական քաղաքականությունը նպաստում է, որ սովորողների մեծ մասը հնարավորություն ունենա շարունակել կրթությունը՝ ձգտի ստանալ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն: Միջնակարգ կրթությունից հետո կրթության համակարգը պետք է ապահովի կրթությունը շարունակելու բազմազան հնարավորություններ՝ կախված սովորողների մասնագիտական կողմնորոշվածության, նրանց հավակնությունների, ընդունակությունների և կարողունակությունների մակարդակից:

Միջնակարգ դպրոցի առաքելությունը կայանում է նրանում, որ այն կրթությունն ընդհանուր համակարգի մաս է՝ բոլոր բաղադրիչներով՝ կոչված ապահովելու ինքնուրույն կյանքի համար շրջանավարտի պատրաստվածությունը: Դպրոցը սովորողին պետք է սովորեցնի սովորել, ժամանակ տրամադրել անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը, ներդնի ու ամրապնդի հասարակության հետ հաղորդակցվելու մշակույթը, սովորեցնի ընտրել իր կարողունակություններին համահունչ մասնագիտություն, որը լինի պահանջարկված և ոչ ժամանակավրեպ: Դպրոցը սովորողին պետք է սովորեցնի սիրել մոլորակն ու տիեզերքը, և այդ սիրով ապրել առողջ ու երջանիկ: Դպրոցը եղել և մնում է երեխային արժանապատիվ քաղաքացի դարձնելու փորձված ուղի, ուստի դպրոցը պետք է առաջընթաց ապրի, ճկուն լինի, կարողանա ճիշտ համադրել հինն ու նորը, լինի համոզիչ, վստահելի և ձգող:

### **Նպատակն է՝**

1. Ապահովել սովորողների կրթական կարիքների բավարարումը՝ ուսուցումը կազմակեպելով սովորողների նախասիրություններին համապատասխան՝ ղեկավարվելով հանրակրթության պետական չափորոշիչներով:
2. Սովորողներին տալ մասնագիտական կողմնորոշում և նախնական մասնագիտական կրթություն, ինչ ամրագրված է Հանրակրթական պետական կրթակարգում,
3. Սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով նկարագրված կարողությունների ձևավորում,

4. Նպաստել միջնակարգ դպրոցի գործարկվող մեխանիզմների ու ընթացակարգերի կատարելագործմանը,

#### **Խնդիրներն են՝**

1. Հաղթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները, ձևավորել սովորողի անձի զարգացմանը նպաստող կրթական միջավայր,
2. Կենտրոնացնել առկա ռեսուրսները և առավել արդյունավետ տնօրինել դրանք,
3. Արդիականացնել դպրոցի նյութատեխնիկական բազան,
4. Սովորողների կարողությունների զարգացում,
5. Դպրոցի ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցության բարելավում,
6. Ուշադրության կենտրոնում պահել սովորողների համակողմանի դաստիարակությունը,
7. Նպաստել ուսուցիչների տարակարգ ձեռք բերելուն:

#### **Սպասվելիք արդյունքներն են՝**

1. Սովորողներին մասնագիտական կողմնորոշում տալը,
2. Քննադական մտածողություն ունեցող քաղաքացու ձևավորումը,
3. Ծառայելով իր առաքելությանը՝ լինել օրինակելի ու մրցունակ:

Սպասվելիք արդյունքներն ապահովելու համար վճռորոշ են համարում դպրոցում առկա ստեղծագործական կարողություններով օժտված մանկավարժական կադրերի աշխատանքի խթանումը, ընթացիկ վերապատրաստումները, գիտելիքների ստուգման կամավոր ատեստավորման մասնակցելը, հզոր ներուժով երիտասարդ, կրթված և հմուտ ուսուցիչների ներգրավումը ուսումնադաստիարակչական աշխատանքներում՝ ապահովելով սերնդավիճակի սահուն ընթացք:

## 2. ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծ Այրումի միջնակարգ դպրոցը կառուցվել է 1972թ.-ին, երբ գյուղը ադրբեջանաբնակ էր: Դպրոցը միակն է երկու գյուղերի համար՝ Մեծ և Փոքր Այրումի: Փոքր Այրումի աշակերտները ստանում են տրանսպորտի համար պետական հատկացումներ: Երկու գյուղերը միացնող ճանապարհը բարեկարգվել է 2009 թվականին: Դպրոցը տիպային է, բաղկացած է 3 երկհարկանի մասնաշենքերից:

1989թ.-ից դպրոցը դարձավ հայեցի առաջին տնօրենի՝ Է.Խաչատրյանի և փոխտնօրեն Է.Միրզոյանի ջանքերով: Այդ ժամանակ գործում էին երկու բաժիններ՝ հայկական և ռուսական (գյուղը վերաբնակեցվեց Ադրբեջանից գաղթած ռուսախոս և հայախոս հայերով): Դպրոցում սովորում էին շուրջ 250 աշակերտներ: 1996թ.-ից ռուսական բաժինը փակվեց և դրա հետ կապված բազմաթիվ մասնագետներ և ընտանիքներ տեղափոխվեցին ՌԴ:

2003 թվականին դպրոցն անվանվել է.

հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Այրումի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Այրումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ «Мец Айрумская средняя школа Лорийской области Республики Армения» государственная некоммерческая организация

ռուսերեն կրճատ՝ «Мец Айрумская средняя школа Лорийской области Республики Армения» ГНКО

անգլերեն լրիվ՝ «Mets Ayrum Secondary School Lori Region Republic of Armenia» State Non Profit Organization

անգլերեն կրճատ՝ «Mets Ayrum Secondary School Lori Region Republic of Armenia» SNPO:

- ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանում գրանցումն արվել է 24.01.2003թ.-ին, գրանցման N 96.210.00657:

- Դպրոցի կանոնադրության վերջին փոփոխությունը կատարվել և հաստատվել է 2020 թվականի հոկտեմբերի 20-ին թիվ 883-Ա որոշմամբ:
- ՀՀ ԿԳՆ –ի կողմից հանրակրթական ծրագրի իրականացման լիցենզիան տրամադրվել է 05.12.2011թ.-ին:
- Ծրագրի անվանումը՝ միջնակարգ հանրակրթական
- Հաստատության տեսակը՝ միջնակարգ հանրակրթական դպրոց
- Իրականացվող ծրագրերի աստիճանը՝ միջնակարգ հանրակրթական
- Տարրական հանրակրթական-100 սահմանային տեղով-Ա 0720
- Հիմնական հանրակրթական-125 սահմանային տեղով-Ա 0709
- Միջնակարգ հանրակրթական-75 սահմանային տեղով-Ա 0591
- ՀՎՀՀ՝ 06604432

Պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ 24.01.2003, գրանցման համար՝ 96.210.00.657

- Հ/Հ՝ 900268000164
- Սպասարկող բանկը՝ աշխատակցի ընտրությամբ
- Դպրոցի շենքը՝ տիպային
- Հեռ.՝ 077090750
- Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծ Այրում, 6-րդ փողոց, 155/1
- Վեբ կայք՝ <http://metsayrum.schoolsite.am/>
- Էլ. փոստ՝ [metsayrum@yandex.com](mailto:metsayrum@yandex.com)
- Աշխատողներ՝ 30
- Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ

- Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային
- Տնօրենի պ.կ.՝ Էդիկ Խաչատրյան
- Համաձայն լիցենզիայի՝ իրականացնում է միջնակարգ կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճաններ:
- Դպրոցի ստեղծման տարեթիվը՝ 1972
- Հարկայնությունը՝ երկհարկ
- Թեքահարթակ՝ 1 դրսի, 1 ներսի
- Ջեռուցման եղանակը՝ փայտ
- Առանձնասենյակների թիվը՝ 4
- Լաբորատորիա՝ 3
- Առարկայական սենյակ՝ 1
- Համակարգչային կաբինետ՝ 1
- Նախնական զինպատրաստություն՝ 1
- Բուժսենյակ՝ 1
- Ուսուցչանոց՝ 1
- Բացօթյա մարզահրապարակ՝ 2
- Մարզադահլիճ՝ 1
- Ինտերնետ կապի առկայություն՝ առկա է
- Գրադարանի ֆոնդը՝ 8114
- Դասարանների թիվը՝ 12

- Աշակերտների թիվը՝ 108

Աշակերտ – համակարգիչ հարաբերակցությունը՝ 2:1

-



**3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**

Ոլորտը	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Վտանգներ, ռիսկեր
<p>1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան</p>	<p>Դպրոցի շենքը տիպային է, տանիքը՝ նորոգված:</p> <p>Ունի երեք երկհարկանի մասնաշենքեր, որոնք կապված են միմյանց: Առկա է սպորտդահլիճ, նորոգված և բոլոր պահանջներին համահունչ կահավորված ճաշարան, հանդիսությունների դահլիճ:</p> <p>Ունի համակարգչային սենյակ, գրադարան, բնագիտական առարկաների համար նախատեսված սենյակներ:</p> <p>Առկա է թեքահարթակ: Ունի բացօդյա մարզահրապարակներ՝ մեծ և փոքր, մարզադահլիճ:</p>	<p>Դպրոցի շենքային պայմանների հիմնանորոգման խնդիր:</p> <p>Առաջնահերթ դասասենյակների պատուհանների փոփոխություն, որի հետ կապված է ջեռուցման նոր տեսակի կիրառումը:</p> <p>Անհրաժեշտ ուսումնական բազայի անբավարար ապահովվածությունը:</p> <p>Ձեռնարկատիրական գործունեության բացակայությունը:</p> <p>Կա դասասենյակները և առարկայական կաբինետները համակարգիչներով համալրելու անհրաժեշտություն:</p> <p>Տեխնոլոգիայի դասասենյակների՝ համապատասխան անհրաժեշտ գույքով ապահովելու խնդիր</p> <p>Որոշ ասանհանգույցների զուգարանակոնքերի և ջրի ծորակների փոխարինում:</p> <p>Էլեկտրաէներգիայի և վառելիքի ծախսի նվազեցում՝ շենքի տանիքում արևային վահանակների տեղադրման միջոցով:</p> <p>Նոր սերնդի համակարգիչների ձեռքբերում, առանձնասենյակներն ու համակարգչային սենյակը վերագինելու նպատակով:</p> <p>Լաբորատորիաների համար գույքի և սարքերի ձեռքբերում, հոսող ջրով ապահովում:</p> <p>Smart գրատախտակների ձեռքբերում:</p>	<p>Գազաֆիկացում (Գյուղի գազի խողովակը դպրոցի շենքից 50 մետր հեռավորությամբ է գտնվում:</p> <p>Նորոգված պատուհաններ ունենալու պարագայում կարելի է ջեռուցման հարցը լուծել լոկալ ջեռուցման համակարգ ստեղծելով:</p>	<p>Ռեսուրսները ձեռք բերելու ֆինանսական ոչ բավարար միջոցներ; Ունեցած սարքավորումների սպասարկումը կազմակերպելու խոչընդոտներ:</p>
<p>2. Դպրոցի ֆինանսական գործունեությունը</p>	<p>Պետության կողմից դպրոցի ֆինանսավորման ապահովում:</p> <p>Դպրոցի բյուջեի նախահաշիվ կազմելու և ըստ պլանավորվածի ծախսելու, հաշվետվություն կազմելու կարողություն:</p>	<p>Դպրոցը ֆինանսավորում է ստանում ըստ դասարանների քանակի և չունի սեփական եկամտի աղբյուր:</p>	<p>Առկա է սեփական հավելյալ եկամուտ ստանալու հնարավորություն՝ ջեռուցումը փորձել կազմակերպել արևային էներգիայով:</p>	<p>Չպլանավորված ծախսերի առաջացում, սեփական եկամուտներ ստանալու դժվարություն:</p>

<p>3.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը, դրանց վարումը</p>	<p>Դպրոցն ունի անհրաժեշտ բոլոր իրավական փաստաթղթերի ցանկին համապատասխան փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա կազմված և սահմանված կարգով հաստատված և վարվող իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը:</p>	<p>Մանկավարժները բավականաչափ իրազեկված չեն անհրաժեշտ իրավական կարգերին և ամբողջովին չեն ուսումնասիրել պաշտոնային պարտականությունները:</p>	<p>ՄՄ նիստերում դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի իրազեկման հնարավորություն՝ ուսուցչի որակավորման խթանում:</p>	<p>Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի, դրանց վարման մեծ ծավալ, ուսուցիչների ծանրաբեռվածություն:</p>
<p>4.Կառավարման և խորհրդակցական մարմինները</p> <p>4.1 Միասնական կառավարման խորհուրդ</p> <p>4.2 Մանկավարժական խորհուրդ</p>	<p>4.1 Կառավարման խորհուրդը ձևավորվել է 2021 թվականի ապրիլից միասնական երեք դպրոցների համար՝ Մեծ Այրումի միջնակարգ, Ճոճկանի միջնակարգ և Քարկոբի միջնակարգ դպրոցների համար: Ըստ կանոնակարգի, եռամսյակը մեկ անգամ հրավիրվում են նիստեր, գպրոցի խնդիրները քննարկելու նպատակով:</p> <p>4.2 Մանկավարժական խորհուրդի գրեթե բոլոր անդամներն ունեն բարձրագույն կրթություն/բացառությամբ 2-ի/</p>	<p>4.1 Կառավարման խորհրդում ընդգրկված են 19 անդամ, որոնց ներկայությունը նիստերին միշտ չէ ապահովվում: Յուրաքանչյուր հերթական նիստ կայանում է հերթական դպրոցում:</p> <p>4.2 ՄՄ նախագահները, դասավանդող ուսուցիչները և դասղեկները դասավտումները և փոխադարձ դասավտումները չեն իրականացնում բավարար չափով և նպատակային:</p>	<p>4.1 Միացյալ կառավարման խորհրդի կազմակերպումը հնարավորություն է տալիս գործող տնօրեններին բացահայտել և շտկել թերությունները, որոնք առաջանում են դպրոցի գործունեության ընթացքում:</p> <p>4.2 Մանկավարժական խորհուրդի բոլոր անդամները ՄՄ նիստերին առնչվող բոլոր իրավական ակտերի և փաստաթղթերի բովանդակությանը, ինչպես նաև անհրաժեշտ կարգերին</p>	<p>4.1 Կառավարման խորհրդի անդամների կեսից ավելիի բացակայության ժամանակ նիստերը չեն կայանում:</p> <p>4.2 Մանկավարժական խորհուրդի այնպիսի անդամներ, ովքեր խնդիրների լուծումը փնտրում են մանկխորհրդի շրջանակներից դուրս:</p>

<p>4.3 Առարկայական մեթոդախավորում (ՄՄ)</p>	<p>4.3 Գումարվում են առարկայական կանոնավոր նիստեր ՄՄ</p>	<p>4.3. Առարկայական ՄՄ-ները ոչ լիարժեք են իրականացնում իրենց լիագորությունները:</p>	<p>իրազեկվելու հնարավորություն ունեն:</p> <p>4.3 Առարկայական դրվածքի, առաջավոր փորձի ուսումնասիրման հնարավորություն:</p>	<p>4.3 Մանկավարժների մոտ նորամուծությունների նկատմամբ հետաքրքրության պակաս, որի արդյունքում առաջանում է նաև պլանավորված գործունեությունը իրագործելու անկարևորություն:</p>
<p>4.4 Ծնողական խորհուրդ</p>	<p>4.4 Ծնողական խորհրդի անդամների կանոնավոր հաճախում ժողովներին և մասնակցություն նիստերին:</p>	<p>4.4 Ծնողական խորհրդի կողմից պասիվություն՝ երեխայի ուսուցման դաստիարակություն բաղադրիչի իրագործման հարցում:</p>	<p>4.4 Ծնողավարության ռազմավարություն մշակելու հնարավորություն:</p>	<p>4.4 Ծնողական խորհրդի անդամների լրացուցիչ ծանրաբեռնվածություն և վերապատրաստում՝ հանդիպումներ կազմակերպելու հարցում:</p>
<p>4.5 Աշակերտական խորհուրդ</p>	<p>4.5 Աշակերտական խորհուրդը առկա է ըստ կառուցվածքային սահմանված ձևաչափի, արվում են մշակութային բնույթի միջոցառումներ</p>	<p>4.5 Աշակերտական խորհուրդը կրում է ձևային բնույթ՝ դասղեկների հետ նրանց կողմից համագործակցության նախաձեռնողականության պակասի առումով:</p>	<p>4.5 Աշակերտական խորհրդի կողմից համակարգային ուսումնասիրություններ իրականացնելու պատրաստակամություն:</p>	<p>4.5 Աշակերտների մոտ հետաքրքրության անկում</p>
<p>5. Աշակերտական համակազմը</p>	<p>Դպրոցը աշակերտների պարտադրված կոմպլեկտավորում է իրականացնում՝ կախված թվաքանակից: Այս պահին</p>	<p>Ունենք դասարաններ, որտեղ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների թիվը մեծ է: ԿԱՊԿՈՒ աշակերտների մեծ թիվ և սակավ օժանդակ մանկավարժական աշխատողներ:</p>	<p>Դպրոցը ունի հոգեբան և ուսուցչի օգնական:</p>	<p>Երեխաների կողմից որոշակի առարկաների ընտրության բացառում՝ ուսուցիչների՝ այլ դպրոցում համատեղ</p>

	ունենք 12 դասարան՝ ամենափոքրը՝ 3 աշակերտով, ամենամեծը՝ 13 աշակերտով համայրված			աշխատանքի պատճառով:
6. Մանկավարժական համակազմ	Մանկավարժական համակազմը պարտաճանաչ է և աշխատում է Հանրակրթության մասին օրենքի, դպրոցի կանոնադրության և չափորոշիչ պահանջներով: Բոլոր ուսուցիչները մասնագետներ են:	Դասի պլանավորումը կարևորվում է ոչ անհրաժեշտ չափով, որից մեթոդական թերությունների արդյունքում պակասում է դասի արդյունավետությունը: Գնահատման թափանցիկությունը կարևորվում է ոչ անհրաժեշտ չափով: Հատուկ մանկավարժի բացակայություն:	Մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը բարձրացնելու հնարավորություն վերապատրաստումների և սեմինարների միջոցով	Մանկավարժական համակազմի դժվար մոտիվացում
7. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Դպրոցը խոշորացված համայնքում է: Համայնքի բոլոր դպրոցներում առկա են ռեսուրսներ և նրանց կողմից առկա է համագործակցելու պատրաստակամություն տարբեր միջոցառումների կազմակերպման ժամանակ՝ օլիմպիադաներ, սպորտային, մշակութային և ինտելեկտուալ մրցույթներ: Համայնքային կառույցների կողմից համագործակցելու պատրաստակամություն, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցելու պատրաստակամություն:	Համագործակցությունները դպրոցների հետ ունեն տարբերային բնույթ և կարիք կա համակարգված ռազմավարությունների մշակման:	Առաջավոր փորձի փոխանակման նպատակով կապ և համագործակցություն համայնքի դպրոցների և կրթության կառավարման մարմինների հետ: Առկա է համագործակցությունների մատչանի ստեղծման և վարման հնարավորություն:	Ռազմավարությունների տարբերություն շահառու կամ գործընկեր կառույցների հետ:
8. Ուսումնական միջավայրը	Դպրոցում առկա է ֆիզիկական և բարոյահոգեբանական նպաստավոր միջավայր	Դպրոցը ունի խիստ հիմնանորոգման կարիք: Դպրոցը ունի բուժկետ, չունի բուժքույր: Դիմում ենք համայնքը սպասարկող բուժքրոջ օգնությանը: Ջեռուցումը իրականացվում է էլ.	Գազաֆիկացման հնարավորություն: Աշակերտական խորհրդի	Դպրոցի սեփական անբավարար ֆինանսական միջոցներ:

	<p>ուսուցման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար: Կարգապահությունը դպրոցում գտնվում է շատ բարձր մակարդակի վրա: Յուրաքանչյուր աշակերտի դարձվում է պատշաճ ուշադրություն՝ ըստ անհրաժեշտության:</p>	<p>Էներգիայի և վառելափայտի վառարաններով:</p>	<p>առաջարկությունները հաշվի առնելու հնարավորություն:</p>	
<p>9.Կրթության որակը ըստ սովորողների ուսումնառության արդյունքների</p>	<p>Կրթական գործընթացում հանձնարարությունները, կազմակերպչական գործողությունները կատարվում են պատշաճ կերպով: Աշակերտների մոտ առկա են անհատական ձեռքբերումներ: Առկա է ԲՈՒՀ ընդունվողների տոկոսի աճ:</p>	<p>Ըստ կատարած ուսումնասիրության, որոշ առարկաների շրջանակներում նկատվում է աշակերտների առաջադիմության անկում: Թեև առարկաների դասավանդման համար ըստ ուս.պլանի ժամաքանակները բավարար են առարկայի յուրացման համար, այնուամենայնիվ, աշակերտները շարունակում են հաճախել կրկնուսույցի պարապմունքների:</p>	<p>Դպրոցը հնարավորություն ունի դաստիարակչական աշխատանքներն իրականացնել ծնողների աջակցությամբ (քանի որ երեխաների դաստիարակության համար հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները)՝ մշակելով դաստիարակության ռազմավարություն: Դպրոցը հնարավորություն կունենա սահմանելու ուսումնական գործընթացի նպատակները և խնդիրները, ճիշտ պլանավորի իր գործողությունները տարվա ընթացքում և դրան համապատասխան դասերը վերլուծվեն,</p>	<p>Ուսուցիչների կողմից առարկայական դրվածքների և դասալսումների գործընթացներում դիմադրություն: Աշակերտների կողմից որոշակի անտարբերություն և ծուլություն:</p>

			իրականացվեն թերությունների քննարկում, վերացման ուղիների մշակում, ինչը կհանգեցնի ուսուցման որակի բարձրացմանը:	
10.Տեխնոլոգիաները և նորարարությունները	Առկա է ինֆորմատիկայի կահավորված կաբինետ, արմաթ լաբորատորիան գործում է SMART սենյակում 24 աշակերտների համար և ընթերցասրահ՝ համակարգիչի առկայությամբ: Դպրոցն ունի ինֆորմատիկայի ուսուցիչ, օպերատոր, ուսուցչի օգնական, առկա է ինտերնետ կապ: Ելնելով արտակարգ իրավիճակի պայմաններում հեռավար ուսուցում կազմակերպելու հրամայականից՝ ուսուցիչների մոտ բարելավվել է տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատանքի հմտությունները: Դպրոցի երկու մասնագետներ համագործակցում են «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն»-ի հետ, իրականացնելով տարբեր միջոցառումներ	Նորարարական տեխնոլոգիաների կիրառումը հազվադեպ է ընթանում դասարանային դասապրոցեսում և մեթոդական զինանոցում:	Դպրոցն ունի գիտամանկավարժական հետազոտություններ և նորարարական ծրագրեր ներդնելու հնարավորություն: Որոշ դասաժամեր ըստ անհրաժեշտության SMART սենյակում անցկացնելու հնարավորություն:	Պահանջվում է հավելյալ աշխատանք՝ սահմանված գործողությունների համակարգված կազմակերպում, և ժամանակային լրացուցիչ ռեսուրսներ և ջանքեր:

Դպրոցի շենքային պայմանները

h/h	Շինությունների և հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը (մ/քառ)	Ծավալը(մ/խոր)	Այլ տեղեկություններ
1	Շենք-շինություն	1	63		Կաթսայատուն /չգործող/
2	Առանձնասենյակներ	2+2	115.3	345.9	
3	Դասասենյակ	12	383	1149	
4	Առարկայական լսարան	1	53	159	
5	Լաբորատորիա	3	182.3	546.9	Երկուսը չգործող
6	Մարզադահլիճ	1	165.6	496.8	Օգտագործվում է տաք օրերին
7	Գրադարան	1	62.7	188.1	
8	Բուժկետ	1	17.7	53.1	
9	Ճաշարան	1	162	486	
10	Հանդերձարան	2	392	1176	
11	Զուգարան	8	62.3	186.9	
12	Մարզահրապարակ	2	6025	18075	
13	Համակարգիչներ	8	-	-	
14	Համակարգչային այլ տեխնիկա/պլանշետ/	10	-	-	
15	Հեռախոսներ	1	-	-	077090750
16	Ջեռուցվող տարածքներ	-	498.3	1494.9	-
17	Ջեռուցման տեսակը	-	-	-	փայտ
18	Ջեռուցման օրերը	116	-	-	
19	Երթևեկող սովորողներ	15	-	-	
20	Երթևեկող ուսուցիչներ	2	-	-	
21	Շենքերի ներսի մաքրվող մակերես	-	2669.7	8009.1	
22	Շենքերի դրսի մաքրվող մակերես	-	17425	-	
23	Սանհանգույցների մաքրվող մակերես	8	62.3	186.9	

**Համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ.**

Դպրոցը համագործակցում է ԿԳՄՄՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, COAF-ի, Լոռու մարզպետարանի, ԱԻՆ-ի, ոստիկանության, Ալավերդու համայնքապետարանի, Ալավերդու ՏՄԱԿ-ի, ՊՀԾ ՀԴՄԾ-ի , Ախթալայի ԼՀԿ-ի հետ:

Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերը: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը.

1. Աշակերտների անձնական գործ
2. Աշակերտների շարժի մատյան
3. Ատեստատների բաշխման մատյան
4. Վկայականների բաշխման մատյան
5. Աշխատողների հրամանագիր
6. Աշակերտների հրամանագիր
7. Աշխատողի անձնական գործ
8. Դպրոցի խորհրդի արձանագրությունների մատյան
9. Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան
10. Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների մատյան
11. Տարիֆիկացիոն փևաթղթերի մատյան
12. Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան
13. Սովորողի տեղափոխման թերթիկ



14. Աշակերտական խորհրդի արձանագրության մատյան:

Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, կանոնակարգվող իրավական ակտերը/ դպրոցի կանոնադրությունը, տեղայնացված օրինակելի իրավական ակտերը, ներքին իրավական ակտերը/, դրանք վարվում են համապատասխան կարգերի պահանջներին համապատասխան:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացնում ենք դպրոցի ներքին գնահատում, որը ֆինանսական եռամսյա և տարեկան հաշվետվությունների հետ տեղադրվում է դպրոցի պաշտոնական կայքում:

Հաստատության կառավարումն իրականացվում է՝ համաձայն կանոնադրության.

Հաստատության տնօրենը դպրոցի ընթացիկ կառավարումն իրականացնում է հաստատության զարգացման ծրագրին համապատասխան և ղեկավարում ուսումնադաստիարակչական, վարչատնտեսական աշխատանքները ՀՀ օրենսդրության, հաստատության կանոնադրության և այլ իրավական ակտերին համաձայն:

Օրացուցային տարվա ընթացքում եռամսյակը մեկ պարտադիր կարգով կայանում են կառավարման խորհրդի նիստեր, որոնց ընթացքում քննարկվում են դպրոցի ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցեր: Քանի որ կառավարման խորհուրդը միացյալ է, նիստերը տեղի են ունենում հերթով՝ նշված դպրոցներից մեկում, իսկ հրատապ հարցերի դեպքում՝ հրավիրվում են արտահերթ նիստեր:

Տնօրենը՝

1. խորհրդի հավանությանն է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը,
2. կազմում է ուսումնական հաստատության տարիֆիկացիան, հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում է պետական լիազորված մարմին,
3. Խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական

հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը:

### **Դպրոցի տնօրենը.**

1. խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցի զարգացման ծրագիրը, հաստիքացուցակը՝ համաձայն մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրի, տարիֆիկացիան, շահույթի բաշխման նախագիծը.
2. մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների և մանկավարժների հաշվետվությունները.
3. մասնակցում է խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.
4. նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը.
5. իրականացնում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը՝ համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի, աշխատանքի ընդունումը, տեղաբաշխումը և աշխատանքային պայմանագրի լուծումը.
6. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության, կանոնադրության, պաշտոնի նկարագրի և աշխատանքային պայմանագրի համաձայն սահմանում է աշխատողների աշխատանքային պարտականությունները, աշխատանքային ռեժիմը, ստեղծում պայմաններ նրանց մասնագիտական որակավորման բարձրացման համար: Խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը.

7. նշանակում է իր տեղակալներին, մասնաճյուղի, կառուցվածքային ստորաբաժանումների (մեթոդական միավորումների) ղեկավարներին, կատարում է աշխատանքի բաշխում նրանց միջև՝ համաձայն կանոնադրության և Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի պաշտոնների նկարագրերի.
8. վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
9. ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
10. ուսումնական պլանին համապատասխան ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար.
11. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն ներքին կարգապահական կանոնների մշակման, ներդրման, երեխաների կյանքի և առողջության պահպանման, ինչպես նաև սովորողների ու աշխատողների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար.
12. համակարգում և հսկում է կառուցվածքային ստորաբաժանումների, մանկավարժական և այլ աշխատողների աշխատանքը.
13. սահմանում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում մասնաճյուղի կամ կառուցվածքային ստորաբաժանման իրավասությունները.
14. ապահովում է նախարարության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող

հանձնարարականների կատարումը.

15. ապահովում է կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը, ինչպես նաև արդյունավետ համագործակցությունը հանրակրթության կառավարման մարմինների հետ.
16. ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը, սանիտարահիգիենիկ վիճակի, աշխատանքի անվտանգությանը և սահմանված կարգով պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարումը և պահպանումը.
17. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է պայմաններ (տարածք, մասնագիտական, կազմակերպական, ինչպես նաև օրենքով չարգելվող այլ օժանդակություն) դպրոցում մանկական, երիտասարդական և այլ մանկապատանեկան հասարակական կազմակերպությունների գործունեության համար.
18. սահմանված կարգով ձևավորում է դպրոցի սովորողների համակազմը, ապահովում նրանց սոցիալական պաշտպանվածությունը: Ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքը.
19. ներկայացնում է դպրոցը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում
20. կանոնադրությամբ սահմանված լիազորությունները իրականացնելիս համագործակցում է տարածքային կառավարման լիազորված մարմնի հետ:

ՄԻԱՅՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ

«Մեծ Այրումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Գոռ Խուրդիկյանի անվան ճոճկանի միջնակարգ» դպրոց ՊՈԱԿ

«Քարկուփի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Սահմանված կարգով ձևավորվել և գործում է հաստատության խորհուրդը՝ ներքոհիշյալ կազմով

N	Խորհրդի անդամի Ա/Ա	Ծննդյան թիվը	Կրթությունը	Ում կողմից է առաջադրվել	Աշխատանքի վայրը և պաշտոնը	Աշխատանքի ստաժը տվյալ դպրոցում	Որ թվականից է խորհրդի անդամ
1	Օլեգ Դուլգարյան	1982	բարձրագույն	ՀՀ ԿԳՄՄՆ	Համայնքային համախմբման ՀԿ-ի տնօրեն	15	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
2	Դավիթ Սարգսյան	1990	բարձրագույն	ՀՀ ԿԳՄՄՆ	Թումանյանի անտառտնտեսության տնօրեն	7	ՀՀ Լոռու մարզպետի 21.12.2022 թիվ 911-Ա որոշում
3	Վարդուհի Ճուղուրյան	1992	բարձրագույն	Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ	Արդվու և Այգեհատի հիմնական դպրոցների ուսուցիչ	9	ՀՀ Լոռու մարզպետի 04.01.2023 թիվ 3-Ա-3 որոշում
4	Լիլիթ Հակոբյան	1990	բարձրագույն	Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ	Թեղուտ ՓԲԸ	8	ՀՀ Լոռու մարզպետի 21.12.2022 թիվ 911-Ա որոշում
5	Հունան Լորսաբյան	1978	բարձրագույն	Մեծ Այրումի մ/դ վարչական	ՋԱլավերդու բարեկարգում՝ ՀՈԱԿ-ի տնօրեն	13	ՀՀ Լոռու մարզպետի 09.01.2023 թիվ 6-Ա
6	Լադիմեր Թամազյան	1978	բարձրագույն	Մեծ Այրումի մ/դ	Մեծ Այրումի մ/դ	16	ՀՀ Լոռու

				մանկ.խորհուրդ	զինդեկ		մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
7	Ջեմմա Խուդինյան	1978	բարձրագույն	Մեծ Այրումի մ/դ մանկ.խորհուրդ	Մեծ Այրումի մ/դ դասվար	23	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
8	Իրինա Օհանյան	1995	միջնակարգ	Մեծ Այրումի մ/դ ծնող.խորհուրդ	-	-	ՀՀ Լոռու մարզպետի 21.12.2022 թիվ 911-Ա որոշում
9	Ռուզան Առուստամյան	1988	միջնակարգ	Մեծ Այրումի մ/դ ծնող.խորհուրդ	-	-	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
10	Ղազարյան Լեյլի	1970	բարձրագույն	Ճոճկանի մ/դ մանկ.խորհուրդ	Ճոճկանի մ/դ փոխսնօրեն	30	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
11	Սաթենիկ Մոսինյան	1973	բարձրագույն	Ճոճկանի մ/դ մանկ.խորհուրդ	Ճոճկանի մ/դ դասվար	30	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
12	Հեղինե Խուդինյան	1984	միջնակարգ	Ճոճկանի մ/դ ծնող.խորհուրդ	Ճոճկանի մ/դ խոհարար		ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
13	Ռիմա Գասպարյան	1984	միջնակարգ	Ճոճկանի մ/դ ծնող.խորհուրդ	-	-	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
14	Արկադի Թամազյան	1978	բարձրագույն	Ճոճկանի մ/դ վարչական	Ալավերդու համայնքապետ	9	ՀՀ Լոռու մարզպետի

							10.05.2021 թիվ 231-Ա որոշում
15	Մարինե Սարգսյան	1968	բարձրագույն	Քարկոփի մ/դ մանկ.խորհուրդ	Քարկոփի մ/դ ուսուցիչ	27	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
16	Սուսաննա Բեժանյան	1972	բարձրագույն	Քարկոփի մ/դ մանկ.խորհուրդ	Քարկոփի մ/դ դասվար	26	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
17	Նարե Գասպարյան	1985	միջնակարգ	Քարկոփի մ/դ ծնող.խորհուրդ	-	-	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
18	Սիրարփի Ճիճիյան	1990	միջին մասնագիտակա	Քարկոփի մ/դ ծնող.խորհուրդ	Թեղուտ ՓԲԸ լաբորանտ	3	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում
19	Կարինե Լուարսաբյան	1962	միջնակարգ	Քարկոփի մ/դ վարչական	Ալավերդու համայնքապետարան օպերատոր	30	ՀՀ Լոռու մարզպետի 10.05.2021 թիվ 231-Ա որոշում

**ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ**

<b>N</b>	<b>Աշխատանքի բովանդակությունը</b>
1.	Հրավիրել համընդհանուր աշակերտական ժողով
2.	Հրավիրել դասարանական ծնողական ժողով
3.	Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները
4.	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման և դաստիարակության բարելավման գործում
5.	Աշխորհրդի ձևավորում և նախագահի ընտրություն
6.	Աշխորհրդի աշխատանքների պլանավորում
7.	Համագործակցության իրականացում

Դպրոցում արմատապես բարելավել ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և նրանց ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում:

Ծնողական խորհրդին վերապահել նաև հետևյալ լիազորությունները՝

- ✓ ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում,
- ✓ ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների, դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում,
- ✓ մասնակցել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին,
- ✓ ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը,
- ✓ աջակցել ծնողական խորհուրդների աշխատանքի կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների համապատասխան բնագավառում: Այդ նպատակով ճշտել՝
- ✓ դպրոց հաճախող այն երեխաների թիվը, որոնք օգտվում են <<Փարոս>> ծրագրից,



- ✓ երկկողմանի ծնողագուրկ աշակերտների թիվը,
- ✓ միակողմանի ծնողագուրկ աշակերտների թիվը,
- ✓ գոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը,
- ✓ հաշմանդամություն ունեցող աշակերտների վերաբերյալ տեղեկատվությունը,
- ✓ նյութապես անապահով սովորողների կազմը,
- ✓ ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը,
- ✓ միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալները,
- ✓ աշակերտների թիվը, որոնց ծնողներն ունեն հաշմանդամություն
- ✓ աշակերտների թիվը, որոնք դասերին չեն հաճախում վարձու աշխատանք իրականացնելու պատճառով,
- ✓ այն աշակերտների թիվը, որոնք անչափահաս են, սակայն ընդգրկված են որոշակի աշխատանքներում,
- ✓ աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում:

Վերլուծության հիման վրա առանձին կառույցների և դրանց ներկացուցիչների միջոցով բարելավել աշակերտների սոցիալական պայմանները:

Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում:

Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ՝ աշակերտական ինքնավարության միջոցով:

- ✓ Ինքնավարությունը պետք է արտահայտվի աշակերտների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտմամբ:
- ✓ Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք հարաբերությունները:
- ✓ Ինքնավարությունը պետք է արտահայտվի և ապահովվի աշակերտների իրավունքների պաշտպանությունը:

- ✓ Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը:

Ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է Կանոնադրության համաձայն.

1. Նախարարությունը/լիազորված մարմին/
2. Հիմնադիր
3. Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը
4. Գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը

Ուսումնական հաստատության տնօրենը դպրոցի ընթացիկ կառավարումն իրականացնում է հաստատության զարգացման ծրագրին համապատասխան և ղեկավարում ուսումնադաստիարակչական, վարչատնտեսական աշխատանքները ՀՀ օրենսդրության, հաստատության կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

Ուսումնական հաստատության և տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական խորհրդի, աշակերտական խորհրդի, կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը նպաստում է կրթական որակի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը: Ոչ միայն համայնքը պետք է ակտիվորեն մասնակցի հաստատության գործունեությանը, այլ նաև պետք է գործի հետադարձ կապը: Հաստատությունը գործուն մասնակցություն պետք է ունենա համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ այդ գործընթացում ներգրավելով նաև սովորողներին: Այն պետք է հանդիսանա տվյալ համայնքի կրթամշակութային կենտրոնը, լինի համայնքահեն: Հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացը պետք է բացահայտի, թե որքանով է արդյունավետ սովորող-ծնող-հաստատություն-համայնք համագործակցությունը, որքանով է այն նպաստում կրթության որակի բարձրացմանը:

Համագործակցության առաջնային և կարևորագույն օղակը դպրոց-ծնող կապի ամրապնդումն է, որը ենթադրում է երեխայի

հանդեպ ուշադրությունը, հոգածությունը և խնամքը, ներառյալ՝ ուսումնական հաստատություն երեխայի կանոնավոր հաճախումն ապահովելը: Կարևոր է նաև ծնողների մշտական կապը ուսումնական հաստատության հետ, ծնողական ժողովներին կանոնավոր մասնակցությունը՝ երեխայի բացակայությունների, առաջադիմության, հաջողությունների և խնդիրների վերաբերյալ տեղեկացված լինելու և նրան աջակցելու համար, ինչպես նաև առաջացած խնդիրները ժամանակին կանխելու համար: Ծնող-դպրոց համագործակցության ստեղծման տեսանկյունից կարևոր է նաև հետևողական լինել տնային հանձնարարությունների վերահսկմանը, անհրաժեշտության դեպքում՝ աջակցության ցուցաբերմանը: Ծնողներն իրավունք ունեն հետևել երեխայի ուսումնառությանը ուսումնական հաստատությունում, մասնակցել դասալսումներին, կազմակերպված արտադասարանական միջոցառումներին:

Հայաստանում կոլեգիալ կառավարման մարմինն ապահովվում է դպրոց-ընտանիք-համայնք օղակի ներգրավվածությունն ուսումնական հաստատության կողմից որոշումների կայացմանը: Խորհրդի կազմում ներառվում են հաստատության սովորողների ծնողները, մանկավարժները, տարածքային կառավարման մարմնի, նախարարության և տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչները: Ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցում են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Դպրոցում շատ է կարևորվում համագործակցությունը պետական և հասարակական տարբեր կառույցների հետ, քանի որ այն ստեղծում է այնպիսի միջավայր, որը, խթանում է սովորողների սոցիալական դրսևորումների ձևավորմանը և զարգացմանը՝ սոցիումում աշակերտների ինտեգրվելու և քաղաքացիական գիտակցություն ձևավորելու համար: Դպրոցն իր հերթին աջակցում է համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես, ազգային տոներ և տոնակատարություններ և այլ միջոցառումներին: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետագոտմանը, վերհանմանն ու կանխարգելմանը:

Դպրոց-համայնք-ընտանիք համագործակցությունը ենթադրում է հետևյալ հիմնախնդիրների իրականացումը.

1. Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնականության բազայի հարստացմանը,
2. Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ, որտեղ ծնողներին կներկայացվեն դպրոցի գործունեության վիճակի, իրականացվող ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին
3. Ծնողներին ներգրավել երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում
4. Ապահովել ծնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ, փորձել միասին գտնել խնդիրների լուծման ուղիներ,
5. Դասղեկների միջոցով տեղեկանալ սովորողների ընտանիքների առաձևակի դժվար պայմաններից, հաշմանդամություն ունեցող ծնողների կամ գործազուրկ ծնողների խնամքի տակ ապրող երեխաների մասին
6. Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ և հանդիպումներ դպրոցի անձնակազմի հետ
7. Ծնողների համար կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ և մրցույթներ: Խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցացաբերած ծնողներին:
8. Աջակցել ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին, կազմակերպել հանդիպումներ հոգեբանների հետ, ներկայացնել ծնողներին տարբեր տարիքի սովորողների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները:

**ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

Ողջ կյանքի ընթացքում ուսուցումը, որը ժամանակակից կրթական համակարգերի ամենաէական առանձնահատկությունն է, բերում է կրթության կազմակերպման նոր ձևեր ինչպես պաշտոնական (ֆորմալ), այնպես էլ ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ) և տարերային (ինֆորմալ) համակարգերում:

Վերջինս իրականացվում է անհատի սեփական ակտիվության ու նախաձեռնության շնորհիվ: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել հարուստ կրթամշակութային միջավայր՝ ի դեմս բոլորին հասանելի ժամանակակից էլեկտրոնային գրադարանների, թվային կրթական ռեսուրսների, հեռավար ինքնակրթության ծառայությունների ցանցի և այլն:

ՏՀՏ-ի զարգացման արդյունքում ժամանակակից մանկավարժների համար հեռավար կրթությունը դարձել է կրթական ծառայությունների առավել նախընտրելի տարբերակ, քանի որ հնարավորություն է տալիս հաղթահարել բնակավայրի հեռավորության, ֆիզիկական սահմանափակ հնարավորությունների, պետական սահմանների և այլ կարգի սահմանափակումները: Այսօր հեռավար կրթության համակարգը կրթական ծառայություններ է առաջարկում թե՛ առաջին մասնագիտության, թե՛ երկրորդ կամ լրացուցիչ մասնագիտություններ ստանալու համար: Այն հնարավորություն է տալիս ուսուցիչներին մասնակցել տարբեր մասնագիտական վերապատրաստումների, դասընթացների, նախագծային ծրագրերի, գիտաժողովների և այլ մասնագիտական միջոցառումների:

ՏՀՏ-ի կիրառումն ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում հնարավորություն է տալիս ավելի հարուստ, դինամիկ և տպավորիչ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Բացի այդ, ՏՀՏ-ը հնարավորություն էն տալիս սովորողների մոտ ուսումնական գործընթացի ժամանակ ակտիվացնել ոչ միայն աուդիալ, այլ նաև վիզուալ հիշողությունը, վերլուծական և ստեղծագործական միտքը: Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման արդյունքում դասերը ավելի պատկերավոր, նպատակային են դառնում, խթանում են երեխաների մեջ

ազատ մտածողությունը, որի արդյունքում աշակերտները շահագրգռվում են նորարական մեթոդների օգտագործման և տարածման հարցում:

2020-2021թթ. ուստարում մենք ունեցել ենք նման փորձ, որ ՀՀ-ում բոլոր ուսումնական հաստատություններն անցել էին հեռավար կրթության: Տվյալ իրավիճակը նպաստեց կրթական ոլորտում այնպիսի դրական փոփոխությունների, ինչպիսիք են՝ ուսուցիչների ՏՀՏ ոլորտին ծանոթացումը, կիրառումն ուսումնական գործընթացի ժամանակ:

Դպրոցում առկա է համակարգչային սենյակ, որտեղ կա 6 համակարգիչ: 1 համակարգիչ առկա է ուսուցչանոցում, որպեսզի ուսուցիչները կարողանան լրացնել էլեկտրոնային մատյանները: 1 համակարգիչ առկա է գրադարանում, որպեսզի կարողանանք ապահովել ուսուցիչների և աշակերտների մուտքն էլեկտրոնային գրադարան: 1 համակարգիչ էլ առկա է հոգեբանի սենյակում, որպեսզի մասնագետները կարողանան լրացնել ԿԱՊԿՈՒ աշակերտներին վերաբերվող համապատասխան փաստաթղթերը: 1 համակարգիչ էլ առկա է տնօրենի սենյակում, որը կիրառվում է ընդհանուր կառավարումն իրականացնելու համար:


Դպրոցում առկա է նաև 2 սմարթ-հեռախոսներ, 10 պլանշետ, 2 պրոեկտոր, 2 պրինտեր (3-ը մեկում) որոնք կիրառվում են դասապրոցեսների ժամանակ՝ ըստ անհրաժեշտության:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում/համեմատական/

	2018 /հազար դրամ/	2023 /հազար դրամ/	ավելացել է /հազար դրամ/
Հիմնական գույք	1973660	5481569	3507909
Շրջանառու գույք	1000200	1365800	365600
<b>Ընդամենը</b>	<b>2973860</b>	<b>6847369</b>	<b>3873509</b>

Նյութատեխնիկական բազայի և այլ ռեսուրսների հաշվեկշռային արժեքի փոփոխությունը

Գրաֆիկ 1



**Դպրոցի գրադարանում առկա գրքերի քանակը**

<b>Գրքերի ընդհանուր թիվը</b>	<b>8114</b>
Դասագիրք	1622
Գեղարվեստական գրքեր	6017
Մեթոդական գրականություն	2097
Ուսումնասօժանդակ գրականություն	600
Քարտեզներ	200
Էլ. տեղեկատվական գրակ.	30

Դպրոցում ստեղծել իրավաբանական-տեղեկատվական գրադարան և այն ապահովել իրավական ակտերով.

1. <<Կրթության մասին>> ՀՀ օրենքը,
2. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքը,
3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքը,
4. <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքը,
5. <<Երեխաների իրավունքների մասին>> ՀՀ օրենքը,
6. <<Երեխաների իրավունքների մասին>> Կոնվենցիան,
7. <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքը,
8. <<Կրթության պետական տեսչության մասին>> ՀՀ օրենքը,



9. <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքը,

10. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքը,

11. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքը:

#### 4.Նպատակների և խնդիրների սահմանումը

##### Նպատակն է՝

- Ապահովել սովորողների կրթական կարիքների բավարարումը՝ ուսուցումը կազմակերպելով սովորողների նախասիրություններին համապատասխան՝ ղեկավարվելով հանրակրթության պետական չափորոշիչներով:
- Սովորողներին տալ մասնագիտական կողմնորոշում և նախնական մասնագիտական կրթություն, ինչ ամրագրված է Հանրակրթական պետական կրթակարգում,
- Սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով նկարագրված կարողությունների ձևավորում,
- Նպաստել միջնակարգ դպրոցի գործարկվող մեխանիզմների ու ընթացակարգերի կատարելագործմանը,

##### Խնդիրներն են՝

- Հաղթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները, ձևավորել սովորողի անձի զարգացմանը նպաստող կրթական միջավայր,
- Կենտրոնացնել առկա ռեսուրսները և առավել արդյունավետ տնօրինել դրանք,
- Արդիականացնել դպրոցի նյութատեխնիկական բազան,
- Սովորողների կարողությունների զարգացում,
- Դպրոցի ծնողական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցության բարելավում,
- Ուշադրության կենտրոնում պահել սովորողների համակողմանի դաստիարակությունը,

- Նպաստել ուսուցիչների տարակարգ ձեռք բերելուն:
- Նպաստել ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցելուն
- Նպաստել աշակերտների և ուսուցիչների համատեղ հետազոտական աշխատանքների իրականացմանը

### **Սպասվելիք արդյունքներն են՝**

- Քննադական մտածողություն ունեցող քաղաքացու ձևավորումը,
- Սովորողներին մասնագիտական կողմնորոշում տալը,
- Ծառայելով իր առաքելությանը՝ լինել օրինակելի ու մրցունակ:

Սպասվելիք արդյունքներն ապահովելու համար վճռորոշ էմ համարում դպրոցում առկա ստեղծագործական կարողություններով օժտված մանկավարժական կադրերի աշխատանքի խթանումը, ընթացիկ վերապատրաստումները, գիտելիքների ստուգման կամավոր ատեստավորման մասնակցելը, հզոր ներուժով երիտասարդ, կրթված և հմուտ ուսուցիչների ներգրավումը ուսումնադաստիարակչական աշխատանքներում՝ ապահովելով սերնդափոխության սահուն ընթացք:

**5. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը**

**Դպրոցի մանկավարժական համակարգի որակական բարելավումը ենթադրում է՝**

1. սովորողների կրթության բովանդակային կառուցվածքի վերազինումը,
2. դպրոցի դաստիարակչական համակարգի աշխատանքների կատարելագործում:

*I. Մանկավարժական համակարգի որակական բարելավում*

1. Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում, որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը:
2. Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքի որակական բարելավումը:
3. Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութեր:
4. Շահագրգռել մանկավարժներին՝ կատարելու հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:

***Մասնավոր արդյունքները***

1. Մանկավարժների մասնագիտական որակի մակարդակի բարձրացում,
2. Մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության համակարգում,
3. Մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում,
4. Մանկավարժների մեթոդական մշակումների մրցակցության ապահովում,

5. Մանկավարժների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:

*II. Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինման առումով իրականացնել հետևյալ խնդիրները*

1. Դպրոցի նորմատիվային ամրապնդում դաստիարակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում դպրոցի կրթական ծրագրերի շրջանակում:
2. Սովորողների իրավունքների պահպանումը պետական կրթական չափանիշներին համապատասխան:
3. Մեթոդական և դիդակտիկ նյութերով ապահովում:
4. Սովորողներին շահագրգռել հետազոտական աշխատանքներ կատարելու համար, նրանց համար վարչարարական հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում:

*Անկալվող արդյունքները*

1. Դպրոցի կրթական քաղաքականության նորմատիվային ամրակայում՝ հիմնարար կրթական ծրագրերի ձևով
2. Ուսումնական պլանի համակարգված և դիդակտիկ ապահովվածություն
3. Մեթոդաբանական և դիդակտիկ նյութերի ընտրության և մշակումների ուղղությամբ մանկավարժների միասնական մոտեցումների ապահովում
4. Մանկավարժների աշխատանքային փորձի ընդհանրացում (համակարգիչ), թվային կրթական պաշարների օգտագործմամբ դասի մոդելի մշակում:
5. Սովորողների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակային համակարգում

*III. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործումը*

Դպրոցում համապատասխան կրթադաստիարակչական միջավայրի ստեղծումը կնպաստի երեխաների

սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը:

*Հիմնական նպատակները*

1. Ապահովել որակյալ կրթություն,
2. Առողջության պահպանման տեխնոլոգիաների ներդրում,
3. Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում՝ մանկավարժների մասնագիտական կրթության առանձնահատկություններն ապահովելու և ուսումնական գործընթացն ակտիվացնելու համար,
4. Մասնակցություն տարբեր մրցույթների,
5. Տարեկան գործունեության վերաբերյալ ամենամյա հանրային հաշվետվություն,
6. Երեխաների առողջության մասին տեղեկատվություն,
7. Բոլոր ուսուցիչների կողմից դասապրոցեսին համակարգչի օգտագործման ապահովում:

Նպատակ 1.	Խնդիրներ	Արդյունքներ	Գործողություններ	Կատարողներ	Ժամանակացույց
<p>Բարելավել կրթական միջավայրը</p>	<p>1. Դպրոցի հիմնանորոգման անհրաժեշտություն</p> <p>2.1. Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրում:</p> <p>2.2. Պահպանել առկա գույքը և գործարկել դպրոցում առկա շենքային ռեսուրսերն ամբողջապես</p> <p>3. Ակտիվացնել ծնողական խորհուրդի գործունեությունը երեխայի ուսուցման դաստիարակություն բաղադրիչի իրագործման հարցում:</p> <p>4.1 Դարձնել աշակերտական խորհուրդը ոչ ձևային բնույթ կրող մարմին.</p> <p>4.2 Ապահովել դասղեկների և աշակերտական խորհրդի միջև համագործակցություն;</p> <p>5. Ապահովել բոլոր առարկաների դասապրոցեսի կառավարելիությունը ուսուցիչների կողմից</p>	<p>1. Բարելավված կրթական միջավայր և դպրոցի ողջ տարածքի նպատակային օգտագործում:</p> <p>2.1 Անհրաժեշտ գույքով ապահովվածություն</p> <p>2.2 Օգտվել առկա սարքավորումներից և գույքից</p> <p>3. Ծնողական խորհուրդը կլինի ավելի ակտիվ և կնպաստի հայրենասիրական դաստիարակությանը բազմաբնույթ էքսկուրսիաներ կազմակերպելու օժանդակությամբ:</p> <p>4.1. Աշակերտական խորհրդի կողմից փորձառության ավելացում և վստահություն, որ իրենց ներկայացրած խնդիրը կքննարկվի:</p> <p>4.2 Դասղեկների և աշակերտական խորհրդի համագործակցությունը կակտիվանա:</p> <p>5. Կատեղծվի բոլոր աշակերտների համար նպաստավոր կրթական միջավայր</p>	<p>1. Համապատասխան լիազորված մարմնին խնդրի ներկայացում, նրանց կողմից հիմնանորոգման ծրագրում ընդգրկում:</p> <p>2. Ձեռք բերել լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր՝ դպրոցի նյութատեխնիկական բազան բարելավելու նպատակով,</p> <p>3. Ծնողների ակտիվ մասնակցություն արտադասարանական միջոցառումների կազմակերպմանը:</p> <p>4. Աշակերտների շրջանում իրենց իրավունքների և պարտականությունների առավել իրադեկում, այլ դպրոցների աշխորհուրդների հաջողված փորձի ներկայացում: Ուսումնասիրել աշակերտներին անհանգստացնող խնդիրները</p> <p>5. Օժանդակել ուսուցիչներին մեթոդամանկավարժական սեմինարների և</p>	<p>1. Տնօրեն, լիազոր մարմին</p> <p>2. Տնօրեն, համակարգող, տնտեսավար</p> <p>3. Ծնողխորհուրդ, դասղեկներ</p> <p>4. Դասղեկներ, տնօրենի տեղակալ, ուսուցիչներ</p> <p>5. Տնօրեն, ՄՄ նախագահներ</p>	<p>1. Առաջնահերթ</p> <p>2. Շարունակական</p> <p>3. Ըստ ԴԱՊ-ի</p> <p>4. Ուս. տարվա սկիզբ և շարունակական</p> <p>5. Ուս. տարվա սկիզբ և</p>

	<p>6.Բարելավել բակի վիճակը</p>	<p>6. Ունենալ բարեկարգ բակ:</p>	<p>տեղեկատվության միջոցով: Սեմինարներ անցկացնել նաև ծնողների և աշակերտների համար: 6. Ցանկապատը նորոգել, որոգման համակարգը բարելավել, ծառատունկ կազմակերպել և խնամել:</p>	<p>, դասղեկներ, ուսուցիչներ, հոգեբան  6.Տնօրեն, համակարգող, բանվոր, աշակերտներ</p>	<p>շարունակական  6. Ուս.տարվա սկիզբ, շարունակական</p>
--	--------------------------------	---------------------------------	--	--	---



Նպատակ 2.	Խնդիրներ	Արդյունքներ	Գործողություններ	Կատարողներ	Ժամանակացույց
